


ՎԱՐԱՄՏԵԼ

ՄԵՍՐՈՓԵԱՆ

Գ Ր Ե Ր

1948, ԹԵՂՈՒՆ




472




ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ

Հայոց գրերի յօրինողը



1875
1876



**„ՀԱՆՆԱԶԵՆԻ ԶԻՄԱՍՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՐԱՑ,
ԻՄԱՆՍԻ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ՝**

ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՑՈՒՆ

«Մարդու ամենահրաշագործներից մեկը **սա-
ռերի** գիւտն է. դա այնպիսի մի մեծագործութիւն է,
որ **սառեր** զսնողին պէտք է Աստած համարել կամ
Աստու նման մի մարդ»:

ՊԼԱՏՈՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն *)

Նախքան գրերի գիւտը, հազարաւոր տարիներէ ընթացքում, մարդիկ իրենց մտքերն արտայայտելու համար գրելու զանազան ձևեր ունէին: Յայտնի են եգիպտական հիերոգլիֆները, նշանադրերը, Ասորեստանի և Բաբելոնի սեպաձև գրութիւնները: Առարկաների, կենդանիների և այլ պատկերների գծագրումով միտք արտայայտելու ձևը կոչւում է պատկերագիր կամ հիերոգլիֆ (Hieroglyphe): Այդ պատկերները եղան գրի առաջին աստիճանը, որ և նախնական նկարչութիւնն է՝ ապա այդ նկարչութիւնը յետագային փոխւեց գրի:

Այս իրողութիւնը մեզ հետեցնել է տալիս, որ նկարչութիւնը գրի նախաստիճանն է:

Գիրը բաժանւում է երկու ընդունելի տեսակի.

ա) Գաղափարագիր և բ) Հնչիւնագիր. առաջինն արտայայտում է գաղափարներ՝ միւսը՝ հնչիւններ:

Գաղափարներ կարելի է արտայայտել պատկերներով և նշաններով, իսկ հնչիւնները՝ վանկերով և տառերով:

Այսպէս կունենանք գրի հետևեալ բաժանումները:

1. Գաղափարագիր (Graphisme) ա) Պատկերագիր (Hieroglyphe) բ) Նշանագիր (Symbolisme)
2. Հնչիւնագիր (Phonétisme), ա) Վանկագիր

*) Սոյն բրոշիւրը համառոտագրութիւն է իմ «Տառերի ծագումն եւ Մեսրոպեան գրեր», անտիպ աշխատանքի:

(Syllabisme), բ) Տառագիր (Alphabétisme) կամ տառ:

Դարերի ընթացքում փոփոխութիւններ և բարե-
նորոգումներ կատարելով, մարդկութիւնը հասաւ տա-
ռերին, որից աւելի կատարեալ միջոց նա մինչև այ-
սօր դեռ չի գտել:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԸ

Հայոց լեզուն պատկանում է հնդկա-եւրոպական
ընտանիքի արիական ճիւղին և պարսկականի, քրդա-
կանի և առաջաւոր Ասիայի մի քանի լեզուների հետ
կազմում է մի առանձին խումբ:

Չնայելով իր նմանութեանը, որ ունի պահլաւա-
կանի և մասամբ նոր պարսկականի հետ («Հայոց լե-
զուն իրանական խմբից է, կազմւել է զեհնդ և պարսիկ
լեզուների հետ միասին» F. Lenormant) ներկայացնում
է մի ինքնուրոյն և պարսկականից առանձնացած
լեզու:

Մեր ազգի պատմութիւնը գրող պատմիչները՝ Կոր-
իւն սքանչելին, Մովսէս Խորենացին և ուրիշները հայոց
գրերի գիւտի դրդապատճառը համարում են կրօնական
մղումը: Սեփական գրերն անհրաժեշտ էին հայոց կուլ-
տուրական կեանքի զարգացման համար, ինչպէս նաև
մեր ազգի ինքնուրոյն գոյութիւնը շարունակելու
համար:

Երդ դարում հայոց գահի վրայ էր ՎՌԱՄՇԱՊՈՒՀ
Արշակունեաց արքան, իսկ կաթողիկոսը՝ Լուսաւորչի
վերջին շառաւիղ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԸ, Արքայական դի-
ւանում պաշտօն ունէր ՄԱՇՏՈՅ անունով մէկը, որ
Տարօն գաւառի Հացեկաց գիւղից էր, Վարդան անու-
նով մի երեւելի (նշանաւոր) մարդու որդի (Կորիւն):
Ըստ ազգ. Ստեփաննոս Մալխասեանի բանասի-

բուժեան՝ Սահակ Պարթևը և Մաշտոցը երկու հարազատ
հղբայրների (Աթանազիենես և Պապ) թոռներ են:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ գիտէր յունարէն և ասորերէն:

Նա արքունի ծառայութիւնը թողնելով հոգևորական կոչում ստացաւ, ապա անցաւ անասլատական կրօնաւորների կարգը, դարձաւ մշտական աղօթքների և զբկանքների մէջ ապրող մի ճգնաւոր:

Քրիստոնէական կրօնի աւանդման միջոցին զգալով հայերէն գրերի պակասը՝ Սահակ Պարթևը քաջալիրանքով, հետապնդում է՝ իրականացնելու համար իր մտայղացումը: Վրամշապուհ թագաւորը լսած լինելով թէ Դանիէլ անուանով մի ասորի եպիսկոպոսի մօտ իբր թէ հայերէն տառեր կան, Վահրիճ անունով մէկի միջոցով պահանջում է այդ տառերը:

Մեսրոպ Մաշտոցը այդ այբուբենով ուսուցանում է երկու տարի, ստանալով վարդապետի կոչում. սակայն այդ գրերը բաւական չէին հայոց լեզուի բոլոր հնչիւնների համար (22 գիր): (Երբանք հին ասորական (արամեական) անգործածելի դրերն էին՝ Հ. Աճառեան): Պէտք էր նորից սկսել:

Մաշտոցը ճամբորդում է Ասորեստանի Եդեսիա և Ամիգ քաղաքները: Երկար, համբերութեամբ աշխատում է իր նպատակին հասնելու համար և վերջապէս յօրինում է մեր լեզուի այբուբենի դրերը՝ 404 թւին:

Նա մեր լեզուի իւրաքանչիւր հնչիւնի համար մի գիր որոշելով, ձեակերպում և գծում է նրանց ձևերը, դասաւորում նրանց տեղերը այբուբենի մէջ, ապա Սամուսատ քաղաքում գտնելով մի յոյն գեղապիր՝ Հռովմանոս անունով՝ նրա միջոցով աւելի վայելուչ ձև-

ւեր է տալիս իր յօրինած տառերին.*) այդ գրերը 36 հատ էին: («Օ» և «Ֆ» գրերը աւելացան Ժ.Ֆ. դարում):

Իր հրաշակներտ այբուբենով Հայաստան է վերադառնում հայ ժողովրդի մեծահանճար Մարգարէն՝ նոյն ինքն Մեսրոպ Մաշտոցը: Վրամշապուհ արքան իր զօրքով, Սահակ Պարթևը հոգևորական դասով, Խաչով ու Խաչառով և ժողովուրդը ծաղկեխնջերով, երգով ու ցնծութեամբ դիմաւորում են մեծ իմաստասէրին, Ռահ գետի ափին:

Մաշտոցն անմիջապէս սկսում է նոր գրերի ուսուցումը. դպրոցներ են բացւում: Ամէնից առաջ նա քառասունգծ գրերով թարգմանում է Սողոմոն իմաստունի առակաց գրքից՝ «Ճանաչել զ'իմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» խօսքերը:

Ասուածաշնչի թարգմանութիւնը կատարում է Սահակ Պարթևը, որ և կոչւում է «Թագուհի թարգմանչաց»:

Հայ ժողովուրդը Սահակ Պարթևին և Մ. Մաշտոցին սրբերի կարգը դասեց՝ հէնց նրանց կենդանու-

*) Անւանի լեզւաբան Հ. Աճառեանն իր ուսումնասիրութեան մէջ՝ «Էջմիածին» ամսագիր 1946 թ. Օգոստ. Սեպտ. Հոկտ. ապացուցում է, որ Հոսփանոս դպիրը որպէս գեղապիր ունեցել է հետեւեալ մասնակցութիւնը հայ գրերի տառաձևերի զծագրման գործում: Նա վայելուչ տեսք է տւել Մաշտոցի յօրինած գրերին՝ այսինքն նրա աշխատանքն եղել է զուտ գեղազրական և զծագրական և ոչ ձայնաբանական, ինչպէս թիւրիմացաբար կարծում էին մինչև այժմ:

«Զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճ և զերկայնն, զառանձին և զկրկնաւորն» (Կորիւն) բառերը գործած-

Թեան օրօք:

Ս. Մեսրոպը քրիստոնէական սիրուց մղւած, յօրինում է նաև վրացիներէ և աղւանացիներէ համար սեփական գրեր:

Նա ամբողջ 35 տարի իր գրերի յօրինումից յետոյ ուսուցանում է հայոց լեզուն և արժանանում «Հայոց աշխարհի ուսուցիչ» կոչման: Ս. Սահակ Պարթևը, 51 տարի կաթողիկոս եղաւ և իր աչքերն յաւիտեան փակեց 438 թ.: Նրա մահից յետոյ կաթողիկոսական գահ բարձրացաւ Ս Մեսրոպը, բայց նրա օրերը հաշւած էին և վեց ամիս յետոյ, 439 թ. մեհեկան ամսի 13-ին (Փետր. 17) իր մարմնական կեանքը հոգեկանով փոխեց:


Ս. Սահակի գերեզմանն Աշտիշատում է:

Ս. Մեսրոպ Մաշտոցի մարմինն իր աշակերտ Վահան Ամատունին ամփոփեց Թեականում և նրա վերայ մի եկեղեցի էլ կառուցեց: Իսկ այժմ նրա գերեզմանի վրայ փառահեղ տեսքով բարձրանում է սրբատաշ քարից շինւած մի տաճար, որ կառուցեց Գէորգ Դ կաթողիկոսը 1879 թ.ին՝ հայերի նւիրատուութեամբ, որպէս մի խօսուէն գնահատական հայ ժողովրդի՝ իր հանճարեղ զաւակի հանդէպ ունեցած պաշտամունքի:

ւում են գեղագրական և ոչ քերականական իմաստով: (Նրբագոյնը և լայնագոյնը տառաձևերի մէջ նրանց բարակ և հաստ գծազրութիւններն են, որ հօրիզոնական ուղղութեամբ բարակ և ուղղահայեացով հաստ են: Կարճ և երկար, ասելով պիտի հասկանալ տառերի ձևացնող կարճ և երկար սիւները, առանձին և կրկնաւոր՝ անջատ (պարզ) (Ո, Ս կլն) և ծաււած կամ ոլորւած ձևեր ունեցող գրերը: (Թ, Մ, Չ կլն):

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեսրոպեան գրերը դարերի ընթացքում ենթարկուել են շատ փոփոխութիւնների՝ որոնց թուր անհրճաբին է՝ քանի որ մենք չունենք մեր գլխի ասիականական զարգացման փաստեր և մեր մատենագրութիւնը այդ կողմից թերի է:



Ե-րդ դարի գրերը կոչոււմ են Մեսրոպեան եօկարագիր, որ իր գոյութիւնը շարունակոււմ է մինչև Թ-րդ դարը (Տես կլիշէն՝ ուր ցոյց է տրւած նաև գրչական գրութիւնը):

Գրի այս տեսակը երկաթագիր է կոչուում, որովհետև գրւում էր երկաթէ գրչով՝ մագաղաթի վրայ, իսկ ըստ ոմանց՝ երկաթի ժանգից պատրասուած թանաքի պատճառով:

Գժրախտաբար Ե-րդ դարից ոչ մի գրչագիր չի հասել մեզ, որպէսզի կարողանայինք տեսնել գրերի նախնական ձևերը: Մեր ամէնահին գրչագիրը՝ հայոց (ՅԼՁ) թւից է որ = 336 + 551 = 887 թ. Գէորդ կաթողիկոսի և Բագրատունի Աշոտ Ա-ի օրով գրւած:

Մեսրոպեան գրերի միւս տեսակներն են, — Միջին երկաթագիր*) (Ք դարից մինչև ժԲ դարը) բոլորագիր (տես կլիշէն), նոսրգիր, շղագիր և փառագիր (ծագրագիր):

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի
լ	խ	ծ	կ	հ	ն	դ	ծ	մ	յ	ն
շ	ո	չ	պ	ջ	ռ	ւ	վ	տ	ր	ց
ւ	փ	ք	:							և

*) Կիլիկիոյ վեհ. Գարեգին կաթողիկոսը՝ Ք-րդ դարին պատկանող մի հատակոտոր ձեռագրի ուսումնասիրութեամբ («Էջմիածին» ամսագիր 1946 թիւ Ոգոստ. Սեպտ. Հոկտ.), որ ժամանակակից է հայոց ամենահին ձեռագրին, (887 թ.) հետևեալ հաւանական եզրակացութիւնն է անում:

«Հայոց գրի զարգացումը ոչ թէ մի տեսակից միւս տեսակին է անցնում, այլ տեսակներն իրենց

ՄԵՐ ԼԵԶԻԻ ՀՆՁԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ (Phonétisme)

Լեզուն մի ազգի յատուկ խօսակցութիւնն է, որ կարող է ունենալ նաև խօսակցական մասնակի ձևեր կամ բարբառներ:

Մեր լեզուն հնչաբանական կամ ձայնաբանական տեսակէտից աս հարուստ լեզու է, նա օժտւած է այնպիսի հնչիւններ արտաբերող զրեքով՝ որոնցից [խ, ծ, ձ, ղ, ճ, շ, ջ] զուրկ են շատ լեզուներ.

Մեծահանճար Մեսրոպ Մաշտոցի այդ անբերի գիւտի համար մեր ազգը միշտ հպարտ է իր հանճարեղ զաւակով:

Մի որևէ լեզւի հնչաբանութեան հիման վրայ է կազմուում նրա ուղղագրութիւնը:

Հնչիւններից կազմուում են բառեր, բառերից՝ խօսքեր իսկ խօսքերից՝ ասացւածքներ: Հնչիւնը, բառը և խօսքը՝ լեզւի բաղադրիչ մասերն են, ուստի մի լեզւի բերականութիւն՝ որ տւեալ լեզւի գիտութիւնն է բաժանուում է երեք մասի:

պէսպիսութիւններն ու զարգացման ընթացքն ունեն գրչութեան արւեստի պատմութեան մէջ, որի մասին մեր տեսութիւնն ու հիմնաւորումը, յուսանք, թէ պիտի յաջողւի կարճ ժամանակից յետոյ մատչելի դարձնել բանասիրութեան:

Նա թւում է երկաթագրի երեք տեսակները՝ բոլորածե, ուղղանկիւն եւ թեք երկաթագիր. ուշադրութեան է անուում նաև որ հատակոտորը և 887 թ. ձեռագիրը, որոնք ժամանակակից են իրար՝ առաջինը գրւած է ուղիղ անկիւն, միջին երկաթագրով իսկ միւսը՝ բոլորածե երկաթագիր է:

ա. Հնչաբանութիւն [հնչիւնների ուսում]

բ. Բառագիտութիւն [բառերի ուսում]

գ. Շարահիւսութիւն [խօսքերի ուսում]

Մեր այբուբենի հնչիւններն, որոնցից իւրաքանչիւրը պատկերացրւած է մի տառածեւով, թւով 38 հաս են [և դիրք չհաշւած]:

Մեր լեզուն ունի ուր ձայնաւոր՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու:

[Ձայնաւորներն այն հնչիւններն են, որոնք մենակ վանկ են կազմում և հնչելիս իրենց ձայնը չեն փոխում]:

Քսան ինը բաղաձայն գրեր՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ. և մէկ կիսաձայն՝ յ:

Բաղաձայներն ըստ իրենց արտաբերման բաժանուում են հետևեալ տեսակների՝

ա. Երբնային բ, պ, փ, վ, (ւ) ֆ

բ. Կոկորդային գ, կ, ք, հ, դ, խ

գ. Ատմնային ղ, տ, թ, զ, ս

դ. Քմային ժ, շ

ե. Ռեզային մ, ն

զ. Լեզային ր, ռ, լ

է. Բարդ ծ, ձ, ց, ճ, ջ, չ

ժ, շ, ձ, ջ, չ կոչուում են շոյղ հնչիւններ, ղ, ս, ծ, ձ, ց՝ սուլոյղ, բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, ֆ՝ պայթուցիկ, լ, ր [ւ], ն, մ, ղ (խ)՝ կակոզ:

Մեր բաղաձայներն ըստ իրենց հնչականութեան 3 տեսակ են:

Նուրբ՝ պ, լ, տ, ծ, կ, դ, ճ, հ

Միջակ՝ բ, վ, դ, ձ, գ, ջ, ժ, ղ

Քաւ՝ փ, ֆ, թ, ց, ք, խ, չ, շ, ս

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՒՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0313373



Տպագրութեան համար պատրաստ են՝

Վ Ա Ր Ա Ս Տ Ե Լ - ի

- 1) «Բանաստեղծութիւններ»-ի ժողովածու:
- 2) «Տառերի ծագումն եւ Մետապեան գրեր»:
- 3) «Յրդի գրեր (ընդարձակ)»:
- 4) Ուրուագծեր «Տառերի նախաբանի»:
- 5) «Մետապ Մատոց» (Պատմական վէպ)։

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԶԱՓ»
Փողոց Բաճանի, պատմ Մեհրան
Քինրան